

ՄՇԽԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Քիթիլուում գրվում են միմիայն խմբագրատան մէջ. Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшахъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տ է 1 է Ք օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով. Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տ է 1 է Ք օ ն № 253.

Հ Ս Ե Ն Ա Գ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Սրբուհի, Սարմէ, Վահան, Գարեգին Երեցեանները, Դաւիթ եւ Մարիամ Դաւթեանները ցաօք արտի յայտնում են ազգականներին եւ ծանօթներին

ԱՂԵՔԱՆԵՐ ԴԱԹԵԱՆ ԵՐԻՑԵԱՆԻ

Մահը, որ տեղի ունեցաւ ամսին 21-ին, առաւօտեան 7 ժամին՝ Յուդարկաւորութիւնը կիրակի, ամսին 24-ին, առաւօտեան ժամի 10-ին, հանդուցեալի ընկալանքից, Անի-խառնակառայ փողոց, սեփական տուն № 3, զէպի Վանքի մայր եկեղեցին. թաղումը 10օ՛ջիվանքի գերեզմանատանը

ՅՈՒՎԱՆԻԱՅԻՆԻՆԻ ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակիօրեայ զրոյց. Երկրաշարժից քանակական օգտին. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար. — ՀՆՈՒՍ-ԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱ-ՍՐԻԱԿԱՆ. Գարբիէլ Պատկանեան.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Այսօր թաղում են Ալէքսանդր Երեցեանին Մեր հորիզոնից անհետանում է մի ծանօթ դէմք էր. Ծանօթ ստացել, բայց սա չէ նշանակում սո- վորական, առօրեայ Երեցեանը բաւական ինքնուրույն դէմք էր, եւ ես այդ դէմքի վրա նկատել եմ շատ գծեր, որոնք զննատանի կն մասնատու մեզ պէս մի ազգի մէջ: Բայց ես պէտք է խոստովանեմ, որ հանգուցելի հետ շատ քիչ ծանօթութիւն ունէի: «Կարծիքներու տարբերութիւնը թշնամութիւնն էն աւելի կը բաժնէ մարդը», ասել է մեր Նանասուր հրապարակախօս Ստեփան Ոսկանը: Այո, շատ ճիշտ է սա, մանաւանդ գրողների աշխարհում: Հանգուցելի Երեցեանը, ինչպէս յայտնի է, հազգէտ է: Բայց մարդը, ինչ մասնազատութիւն էր ունենայ, որոշ աշխարհայնացիք, որոշ կարծիքներ կը ուղղութեան տէր մի էակ է: Երեցեանը շատ անգամ է ճիշտ ու որոշ կերպով ցոյց տուել իր հայեացքները: Յիշե՛ք հէց նրա գրուածքը Ստեփանոս Նազարեանի դէմ: Կարծիքների այդ տարբերութիւնը բաժանում էր մեզ, մշակականներին, ճանաչելի Երեցեանից, թէ՛ եւ Երեցեանը սկսել էր գրել եւ Գրիգոր Արծրունու կենսագրութիւնը: Բայց կարծիքների տարբերութիւնը այնքան խոր մէջ չէր փորել մեր եւ Երեցեանի մէջ, որ

մենք երբէք չը հանդիպէինք իրար, չը ճանաչէինք իրար եւ ինքս մի անգամ գործով այցելել եմ Երեցեանին Նատել եւք ժամերով խօսել եւք շատ սիրալիկ կերպով: Ի՞նչպէս էր տեղի ունենում այդ բանը: Կարծիքների տարբերութիւնը այդ ժամերին երեւան չէր գալիս, մենք միմեանց հետ վիճելու, միմեանց համոզելու համար չէինք նստում խօսելու: Կար մի չէ՞րք գործ—անցեալը: Նրա շուրջն էլ պարտում էր մեր խօսակցութիւնը: Ի հարկէ, կարծիքների տարբերութիւն կայ եւ անցեալի վերաբերմամբ. բայց մենք անցեալի փաստերն ու իրողութիւններն էինք մէջ բերում, թոյլ տալով, որ ամէն մէկն ունենայ իր սեփական կարծիքը զրանց մասին:

Ան այդ սակաւթիւ այցելութիւնների ժամանակ եւ կարողացել եմ այնքան ճանաչել հանդուցեալին, որ այսօր վստահանում եմ ներկայացնել նրան ձեզ, ընթերցող, չը մոռանալով ինչ իմաստուն ասացուածքը. «Պատճառ բարեկամ է, բայց աւելի մեծ բարեկամ է ճշմարտութիւնը»:

Անչիստատի նեղ ու զառիվար փողոցի վրա, երեսը դէպի Կուր գետը դարձրած, մի փոքրիկ տուն կայ: Դա Ալէքսանդր Երեցեանի սեփականութիւնն է, միակ անշարժ սեփականութիւնը: Մտնանալով տան դրսի դռներին, մի բան ուղիղ ձեւը ճակատին ասում է, թէ դուք հնազէտի եւ հնասէրի տուն էք մտնում: Վաղուց, շատ վաղուց եւ մեր դռների վրայից անհետացել նահապետական մեծ երկաթէ «Ֆախեր», նոյն իսկ մեր գաւառական խուլ անկիւններում էլ զանգակը փոխարինել է այդ ինչ կոջակալը Երեցեանի դռների վրա մնացել է այդ հնութիւնը. մինչեւ որ չը ծեծէք այդ դուռը, տարածելով լուռ փողոցի մէջ երկաթի ձայնը, ձեզ ներս չեն թողնի:

Տան վերին յարկում մի հասարակ, զարդարանքից զուրկ սենեակ էք մտնում: Բայց ես սխալվեցայ «զարդարանքից զուրկ» անուանելով

սենեակը: Ինքը, Երեցեանը, սաստիկ կը նեղանար, եթէ այսօր լսէր այդ խօսքերը: Նա այդ սենեակի զարդարանքները չէր փոխի աշխարհի հարստութիւնների հետ:

Ի՞նչ զարդարանքներ էին դրանք: Պատերի վրա շինված են հասարակ, բաց պահարաններ, ուր դարպած են գրքեր, թղթեր: Մի ամբողջ աշխարհ է դա, կազմված ինչ, փոշոտ, դեղնոտ թղթերից, ինչ գրքերից կամ հնութեան մասին խօսող գրքերից: Մտնեցէք այդ կոյտերին, շատ գրքերի, թղթերի միջին արտաքին տեսքը ձեզ թոյլ չէ տալիս հետաքրքրվելու, թէ ինչ են դրանք. կան վերնադիրներ, որոնք ձեզ հեգնութիւն են պատճառում, եւ դուք ասում էք, թէ այս մարդը ուղղակի մի մտղութիւն է ունեցող գրագի այստեղ բերելու ամեն մի բան, որ ինչ է...

Այս մարդը... Նայեցէք այժմ նրան: Մի կարճահասակ ծերունի, ակնոցները դուրս, նստած է իր այդ կոյտերի մէջ, նայում է, թերթում է, նկատողութիւններ է անում: Հարկաւոր էլ չէ, որ դուք խօսացնէք նրան: Նա ինքը կը սկսէ խօսել իչ հարստութիւններից խօսում է մի վարակիչ ակնոցակով, խօսում է այնպիսի շեշտով, այնպիսի վառ հետաքրքրութեամբ, որ դուք չէք կարող ուշադիր չը լինել: Դուք տեսնում էք, որ ձեզ հետ խօսում են ինչ, պատահողուն, ժանգոտած թղթերը: Անհարմար միջոց դուրս եկան մարդիկ, անցած ճանցածի մարդիկ, որոնք այժմ հող են դարձնել, բայց որոնք մեզ, ապոզներին, նման են, նոյն յոյսերը, նոյն ձգտումները, նոյն կրքերը, նոյն սխալներն ու փորձերը, նոյն ժպտուն եւ սխալ գործերը:

Ի՞նչպէս է, որ այս ծերունին կարողացել է այդպէս ամբողջ ու անպակաս թողնել հող ճանցածների պատկերները: Ի՞նչպէս է, որ նա այդքան հարազատ միջնորդ է գերեզմանի եւ ապրող մարդկութեան մէջ: Օ՛, չը կարէք թէ հեշտ է նա ձեռք բերել այդ հմտութիւնը: Տարիներ, երկար տարիներ լուսացնել կտոր-կտոր թղթերի վրա, հաւաքել այդ կտորներից դէպից-դէպից, չունենալով դրամական մեծ միջոցներ, շատ անգամ կորելով ընտանիքի հացից, սպա նայել այդ թղթերին, կարկատել, կիսատ-պոտ տեղեկութիւնները բերել, դասաւորել, ամբողջացնել, տանջվել այդ միջոցին ծագող անթիւ հարցերից, որոնք ու գտնել այդ հարցերի պատասխանները—անհանչալէս էր անց կացումը Երեցեանը իր կեանքը, անհանչալէս «վայելչութիւն» էր նա քաղում մեր այս աշխարհից:

Դպրատններին էլ սովորելու նրանից: Նրա խելքի եւ կրթութեան վրա հիացած Յովհաննէս արքեպիսկոպոսը առաջարկում է 16 տարեկան Գարբիէլին քարոզ խօսել եկեղեցում, եւ քանչեքի խօսած քարոզից յետոյ, Յովհաննէս արքեպիսկոպոսը Գարբիէլին փարպազ է հագցնում, արանով ցոյց տալ ուղեւոր, որ նա նրան հոգեւոր աստիճան է տալիս, որպիսի կոչման սակայն նա ոչ սէր ունէր եւ ոչ ցանկութիւն: 1825 թ. Գարբիէլին ամուսնանում են աստուարական վաճառականի 16 տարեկան մի յայտնի գեղեցիկուհի եւ խելացի աղջկայ Նիլիսարէթ Սուրբուկեանի հետ, որին նա խիստ սիրում էր, գեղեցիկութեան համար նրան Մաղիկ էր կանչում: Սրա հետ նա ապրեց 64 տարի: Գարբիէլը յաճախ ոտանաւորների մէջ իր սիրելի Մաղիկի գովէր իր անունը, եւ արժէք էր, որպիսիս եւ նա անդաւաճան սիրով բաժանում էր նրա հետ ոչ միայն ուրախութիւն, այլ եւ վիշտ ու զրկանքներ եւ պահպան հրեշտակի նման պահպանում էր նրան տանջանքների ու նեղութիւնների ժամանակ, սփոփում, ամբողջում էր նրա ցաւերը, —ցաւեր, որոնք այնքան շատ էին նրա բազմալիշտ կեանքում:

1827 թ.ին Սերովլէ վարժապետը Նոր-Նախիջևանից հրաւեր է ստանում գնալու այնտեղ եւ բաց անելու դպրոց, բայց միայն այն պայմանով, որ Գարբիէլ որդուն էլ բերէ: Նրանք սիրով ընդունում են նոր-Նախիջևանցիների

Դա մի եզրուական աշխատութիւն է, ինչ կեանք: Քանի անգամ այդ սենեակում ես զարմացել եմ այդ կեանքի վրա: Եւ մի եւ նոյն ժամանակ հակացել եմ, թէ ինչն է կատարում այդ բոլորը: Թղթի, գրքերի կոյտերը իրանք իրանք չեն եկել ու բազմել այս դարակներում. նրանց հաւաքել է սէրը, անչէլ, փանտիկոսական սէրը, որ երբէք յոգնածութիւն, հիասթափումն չէ զգում, դառնութիւնները անսման քաղցրութեան է փոխում: Երեցեանը մի զարմանալի աշխատատեղ էր: Նոյն-իսկ մահվան անկողնում նա չէր մոռանում իր սիրելի թեմաները, հարցերը: Հնաքիտութեան մի արտասովոր բանուոր—անհանչ էր Երեցեանը: Նա հաւաքել է, ամբարել է միջինի համբերատարութեամբ, յամառ տոկունութեամբ: Եւ նրա այդ գործունէութեան արդիւնքն է այն հարուստ հնագիտական ժողովածուն, որ նրա ամբողջ հարստութիւնը, նրա ամբողջ պարծանքն է կազմում:

Չեմ կարծում, որ մեր երկրի անցեալով հետաքրքրվող կարողացած լինի աշխատել անցեալ Երեցեանի օգնութեան: Եւ ինչն էլ դիմել եմ նրան մի քանի անգամ: Իմ աշխատութիւնների մէջ պատահում էր, որ ես կանգ էի առնում որեւէ պատմական աղբիւրում, հանելուկային կերպարանք ունեցող հարցի առջեւ: Դժուար է այդ գրութիւնը: Զգում ես, որ միանգամայն անօգնական ես, տեսնում ես որ չունես աղբիւրներ, առաջնորդող թել չես գտնում, եւ ձեռքերդ թուլանում են: Անհարմար մի քանի դէպքերում ես դիմում էի Երեցեանի ամբարան թղթերի օգնութեան: Միայն իմ գրութեան մէջ եղած մարդը կարող է հասկանալ, թէ սրպիսի ուրախութեամբ ես տեսնում էի, որ ծերունի հնագէտը սիրալիկ կերպով, հմուտ մարդու ինքնավստահութեամբ ինձ ցուցումներ էր տալիս, առջեւ դնելով հարկաւոր թղթերը:

Դա այն մարդկանցից էր, որոնք փակում են իրանց ձեռք բերած յիշատակարանները, իրանք վայելում են իրանց համար: Ճիշտ է, Երեցեանը իւրաքանչիւր կտոր թղթի համար գոռում էր, ճիշտ է, միայն նրան շատ մտօնիկ մարդիկ կարող էին տանել նրա զարդարանքի այնքան մեծ կարեւորութիւն չունեցող թղթեր եւ գրքեր, բայց կար այն հանգամանքը, որ նրա հիւրընկալ դուրը բաց էր ամէն մէկի առջեւ: Երեցեան ծերունին կը հիւրասիրէր ձեռ թղթով եւ կը նստէր ձեզ հետ, պարտաստ մոռանալ ամէն ինչ, պատաստ խօսել ձեզ հետ մինչեւ կէս գիշեր:

առաջարկութիւնը եւ իրանց ընտանիքներով զաղթում են այնտեղ ու յետոյ բաց անում դպրոց:

Գարբիէլը այսպիսով Նոր-Նախիջևանում մնաց մինչեւ 1832 թ. վերջը, երբ նա հրաւեր ստացաւ Բեսարաբիայի արքեպիսկոպոս Ներսէսից կօնխտորիայի քարտուղարութեան պաշտօն ստանալու: Գործունէայ ու եռանդոտ Ներսէսը, որը լսած էր Գարբիէլի խելքի եւ կրթութեան մասին, վաղուց կարօտում էր այդպիսի եռանդոտ օգնականներին: Եւ անհարմար էր թողնում է իր 3 փոքրահասակ երեխաներին իր կնոջ եւ հօր խնամքին ու գնում Քիչիկեւի Փոքր որդին մի քանի ամսական էր— դա վերջը յայտնի Ռաֆայէլ Պատկանեանն էր, մեր ազգային բանաստեղծ Գամառ-Քաթիպան (ծնվ. 20 հոկտ. 1832 թ.): Քիչիկեւում նա մտնել յարաբերութեան մէջ է լինում ապագայ կաթողիկոս Ներսէսի հետ: Ներսէսը չափազանց յարգում էր Գարբիէլին նրա խելքի եւ կրթութեան համար, բայց մի եւ նոյն ժամանակ չէր հանդուրժում Գարբիէլի հայեացքների անկախութեանն ու հակաճատութիւններին: Եւ այդ պատճառով նրանց մէջ յաճախ ընդհարումներ էին լինում: Բայց ես այնպէս, ի պատիւ Գարբիէլի պէտք է ասել, որ նա մինչեւ իր կեանքի վերջին օրերը, կուրացած եւ ծերացած հասակում, բայց դեռ հողով երիտասարդ, միշտ յարգանքով էր յիշում Ներսէսին:

իր այդ առանձնարանից նա անզոր դուրս էր բերում նիւթեր, ուսումնասիրութիւններ Դեռ գիմնադրարի աշակերտ էր նա, երբ սկսեց գրել «Լեզուի» մէջ: Եւ երբ ես այսօր ուզում եմ մտաբերել, գոնէ թուօցիկ կերպով, թէ ինչ է նա գրել 60-ական թւականներից սկսած, առաջ է դուրս գալիս մանր ու մեծ յօդուածներ, գրքերի համարեա անվերջ շարք: Ապա նա Եւ մարդու այդ աշխատասիրութիւնը կարելի է այս կամ այն կերպ վերաբերել Երիցիանի գրուածքներին, բայց նոյն-իսկ շատ պակասութիւններ գտնողն էլ չէ կարող մի խորուն հիացմունքով չը յիշել այդ ջանասէր, անզուր աշխատաւորին:

Մեր խոսակցութիւնների միջոցին ես նկատել եմ, որ Երիցիանը շատ անգամ մանր մուկ հարցերի եւ փաստերի վրա ազգայն ու շարժութիւն է դարձնում: Ես մասամբ հասկանում էի դրա պատճառը: Մարդը առաջին աղբիւրներից էր ուսումնասիրում, այսինքն հում նիւթերը, որոնց շատ անգամ քաղում էր թղթերի դահազան պատահականից: Բնական էր, որ նա հաւատարմաբար կարեւոր ու թանկագին համարէր ամեն մի փաստ, որքան էլ նա անկարեւոր լինէր: Այդ բանը երևում է եւ նրա աշխատութիւնների մէջ: Այսպէս, գրելով Ներսիսեան դպրոցի պատմութիւնը, Երիցիանը կարեւոր է համարել դեռ նրա մէջ եւ Ներսէսի ամենօրեայ մանր մուկը ծախսերի ցուցակը: Պատմութիւն Երիցիանը, իսկապէս, չէր գրում: Նա չէր մշակում նիւթերը, չէր ամբողջացնում պատմութիւնը քննական հայեացքով: Բայց նա տալիս էր նիւթեր պատմութեան համար: Եւ ապագայ պատմագիրը անպատճառ ձեռքի տակ կունենայ Երիցիանի աշխատութիւնները:

Բայց ես միայն հարեւանցի կերպով յիշեցի Երիցիանի գրական գործունէութիւնը: Վերադառնում եմ էլի հնագէտի սենեակին:

Մենք, հայերս, անհատական մարդիկ ենք: մեզանում անհատներն են գործ տեսնում: Եթէ չը լինէր Երիցիանը, ուր պիտի մնային նրա հուշարձան թղթերն ու գրաւոր դոկումենտները: Պէտք է ի կարելի, կորչէին, ոչնչանային գահազան խու ու անյարտ անկիւններում: Երիցիանը, մի անհատ, իր թոյլ ուժերով կարողացաւ ազգայն գործ կատարել, խոշոր ծառայութիւններ մատուցանել մեր պատմութեան, ազատելով նրա դոկումենտները կորստից: Ոչքան նա կենդանի էր, մենք կարող էինք ապահով լինել, որ այդ հարստութիւնը ոչ միայն չի կորչի, այլ կաւերանայ, ոչ թէ չի փակվի կողպէքների տակ, այլ մատչելի կը լինի ամեն մի հետաքրքրուողին:

Այժմ Երիցիանը չը կայ: Վատակած, յոգնած ամենօրեայ դասն աշխատանքներից, նա այսօր գնում է իր յաւիտենական հանգստի տեղը: Բայց թողնում է իր զեղեցիկ գործը, այսպիսի վառ սրբով հուշարձան ու պահպանած իր ժողովածուն:

Ինչ պէտք է դառնայ այդ ժառանգութիւնը: Ահա ծերունի աշխատաւորի յիշատակը յարգելու մի լաւ միջոց: Կը լինի մեզանում գոնէ այս անգամ այնքան հասարակական պարտաճանաչութիւն, որ պահպանենք նրա թողած ժառանգութիւնը, պահպանենք այնպէս, որ նա դարձեալ մատչելի լինի ամենքին: Կը կարողա-

նանք, վերջապէս, հրատարակել պատմական այն նշանաւոր յիշատակարանները, որոնց ինքը, հանգուցեալը, չը կարողացաւ հրատարակել: Նայենք մեր շուրջը: Մենք ոչ գրադարաններ ունենք, ոչ թանգարաններ: Ո՛ւր պիտի նիւթեր գտնէ մեր անցեալով հետաքրքրուողը: Այլընտանդ Երիցիանի թողած ժառանգութիւնը կարող է նրա ամենալաւ յուշարձանը լինել: Միայն թէ հասկանանք այս բանը, միայն թէ մեր աշխատաւորներին լոկ բառերով չը յարգենք...

ԵՐԿՐԱՆԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Երկրաշարժից վնասվածների օգտին ստացանք հետեւեալ նուիրատուութիւնները.— Թիֆլիսում, մի օրինորդից 10 ռուբլի:

Եւլախից—60 ռուբլի, որ Անդրէաս Նաբիեան ժողովել է հետեւեալ անձերից.— Ն. Մէլիք-Փաշայեան եւ ընկ. 20 ռ., Ա. Արքաւանան 10 ռ., Կ. Օհանեան, Ա. Մէլիք-Փաշայեան, Ա. Նարինեան, Մ. Ա. աղեան—5-ական ռ., Զ. Սարոյանեան 2 ռ., 50 կ., Մի ռոմ 2 ռ., 50 կ., Չ. Չարաբեան 2 ռ., Կ. Մարիանեան 2 ռ., Մ. Ալլահվերդեան 1 ռ.:

Ե կ ա տ ե Ր Ի Ն Օ Ղ ա Ր Ի ց—1362 ռուբլի, որ ժողովել են Գէորգ քահանայ Չաքարեան եւ Արսէն քահանայ Վարդանեան հետեւեալ անձերից. Ղ. եւ Գ. Թորոսեաններ 400 ռ., Բ. Չարաբեան եւ Մ. Խաչատրեան 150 ռ., Եղբ. Բոգարսուկեաններ 150 ռ., Զ. Բոգարսուկեան 25 ռ., Բ. Ա. Яповский 25 ռ., Պ. Պետրոսեան 10 ռ., Զ. Աւետեան 100 ռ., Ս. Խաչատրեան 50 ռ., Եղբ. Միլվեկեաններ 10 ռ., Զ. Խաչատրեան 15 ռ., Ս. Թոփալեան 10 ռ., Զ. Շիրիտեան 5 ռ., Զ. Բոգարսուկեան 10 ռ., Կ. Կիսիկեան 10 ռ., Զ. Բոգարսուկեան 25 ռ., Լ. Արզումանեան 10 ռ., Ս. Ն. Խաչատրեան 25 ռ., տիկ. Տ. Կարապետեան 15 ռ., Ղ. Երկանեան 10 ռ., Ա. Չարամիսեան 5 ռ., Կ. Թարաղեան 5 ռ., Ա. Բէլեպեան 1 ռ., Ս. Խէլիկեան 5 ռ., Զ. Աշրափեան 10 ռ., Մ. Հալլաճեան 2 ռ., Պ. Հալլաճեան 5 ռ., Դ. Լափրանեան 10 ռ., Ս. Քեռոյեան 5 ռ., Ե. Ալլահվերդեան 1 ռ., Զ. Թոփալեան 5 ռ., Եղբ. Արզումանեաններ 10 ռ., Մ. Չարսիեան 5 ռ., Զ. Աղաջանեան 25 ռ., Մ. Պոպովեան 3 ռ., Լ. Շաղովալեան 2 ռ., Պ. Կարապետեան 10 ռ., Գ. Սախաւեան 2 ռ., Կ. Սարգսեան 3 ռ., Ոսկ. անչար 1 ռ., Մի Ոսկ. 2 ռ., Ա. Սարգսեան 5 ռ., Ծ. Միխայեան 1 ռ., Մ. Մովսէսեան 1 ռ., Մ. Իշխանյան 1 ռ., Գ. Խոջաբարսեան 10 ռ., Ա. Էրզրումցեան 1 ռ., Մամիկոնեան եւ Քէլէճեան 3 ռ., Ա. Խաչուրուղեան 5 ռ., Գ. Դուրբերեան 3 ռ., Կ. Նազարեան 150 ռ., Ոսկ. 10 ռ.:

Ա ս խ ա Ր ա Ղ Ի ց՝ 25 ռուբլի, որ դերասան Վրոյրի տուած երեկոյթից գոյացած եկամտի մի մասն է:

Ր օ ս տ օ Վ Ի ց՝ 2 ռ. 50 կ., որ նուիրել են Պ. Բարսեղեան 50 կ., Ս. Աւագեան 2 ռ.:

Կ ե Ր Է Ի ց՝ օր. Ա. Մանոյեանից 3 ռ.:

Ա ս խ ա Ր ա Ղ Ի ց՝ Ի վանթովից 2 ռ.:

Ը ն Չ ամենը 1464 ռ. 50 կ., իսկ նախկին ստացվածների հետ միասին 3271 ռ. 18 կ.:

հողաբարձուներ հայ հասարակութեան լաւագոյն եւ ընտիր ներկայացուցիչներից, եւ առաջին հողաբարձուներն եղան.— Իլյան Յովհ. Չաք. Երկազնարազուկ-Արզուլեան, Գաբր. Յովհ. Թաւմաշեան, Միքիմիանեան ու ուրիշներ: Առաջին ուսուցիչն եղաւ Գաբրիէլ եղբայր Միքայէլ Սերովեան Պատկանեանը, իսկ յետոյ 1850—1852 թ. յայտնի Ռաֆայէլ Պատկանեանը. առաջին տեսուչը (որ ծրարով եւ կանոնադրութեան բացումը զարգրում), ինչպէս եւ վայել էր, նշանակված էր Գաբրիէլ Պատկանեանը:

Բայց այս համեստ դերով Գաբրիէլը չէ բաւականանում, նրա կորովի, առողջամիտ խելքը եւ եռանդուն բնաւորութիւնը պահանջում է եւս շուրջ գործունէութիւն, նա մտածում է ոչ միայն հիմնել սեփական տպարան, այլ եւ պարբերական հրատարակութիւն, որի անկասկածելի պահանջը վարուց զգալով էր եւ տն 1850 թ.ին նա բաց է անում հայ տպարան եւ հրատարակում «Արարատ» անունով շաբաթաթիւթը, առաջին աշխարհաբար լրագիրը ուսանայերի մէջ: Այդ լրագրում նա զետեղում է իր յօդուածները ու բանաստեղծութիւնները, նաեւ իր աշակերտների Միքայէլ Նալբանդեանի ո՛րքան ժամանակ զարոյց փակ է մնում, այդ զգալունարար ամբողջ լրագիրն է, իսկ լինող վերստին բացվում է նոր ծրարով եւ կանոնադրութեան Գաբրիէլի ձեռքով, ներսե կաթողիկոսի լանձնարարութեամբ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Վրացիկավագի ճանապարհից հեռագրում են փետրվարի 22-ին, որ Կօբի կայարանի եւ ինչի մէջ տեղում ճանապարհը ծածկված է երկու արշին հաստութեամբ խոր ձիւնով: Գնապարհը մաքրելու եւ հարորդակցութիւնը թիֆլիսի եւ Վրացիկավագի մէջ վերականգնելու համար ձեռք են առնված միջոցներ:

Թիֆլիսի քաղաքային կրէդիտի ընկերութիւնը նուիրել է յօդու Շամխու երկրաշարժից վնասվածների 1000 ռուբլի: Այս գումարը արդէն ուղարկված է Բագուի նահանգապետին:

Շամխու երկրաշարժից վնասվածների օգտին Թիֆլիսի արտիստիքական ընկերութեան կողմից ներկայացուցից գում արդիւնք մնացել է 1300 ռուբլի:

Մեզ հարորդում են, որ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը իր վերջին նիստում ընտրեց ներկայացուցիչներ իր կողմից Ն. Սուլեյման Կրիմ-Գիրէյին, իշխան Վախվախովին, Ա. Եւանդուլովին, որոնք պէտք է մասնակցեն ֆիլոսոֆիայի կոմիտեի նիստերին: Ընկերութեան նախահաշիւը եւ հաշիւը հաստատվեցին, եւ շուտով պէտք է կայանայ տարեկան ընդհանուր ժողով փոխ նախագահ եւ խորհրդի անդամներ ընտրելու համար:

Մեզ ինդրում են հարորդել, որ այսօր, փետրվարի 24-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում, զերասան Արմենեան, տեղական դերասանների մասնակցութեամբ, տարւել է արտիստիքական երեկոյթ, որի ժամանակ ներկայացվելու են երկու վոզլիլի եւ մի կուիտե— «Միկիկ», «Քիչերկայ սարը խէր է» եւ «Կիչեմոնի վեղարծր»: Ինչպէս լուում ենք, պ. Արմենեան առաջիկայ մեծ պահին տարւել է մի շարք ներկայացումներ, տեղական հայ դերասանների մասնակցութեամբ, Արտիստիքական ընկերութեան թատրոնում: Առաջին ներկայացումը տեղի է ունենալու մարտի 5-ին: Այդ օրը կը ներկայացնի Ալբրէք Միւսսէի նոր թարգմանված «Վաղարշապէս» անունով պիէսը:

Ուրբաթ, փետրվարի 22-ին, Թիֆլիսի դատաստանական պալատում վերջացաւ Բորչուրի նախկին զաւտապետ Արնօլի դատը: Մեղադրական ակտը բազկացած էր 36 կէտերից: Երոնցով Արնօլը մեղադրվում էր բազմաթիւ դեղձու մեք գործելու մէջ իր գաւառապետութեան ժամանակ: Երեկոյեան մասի 10-ին դատաստանական պալատը յայտնեց իր վճիռը, որով մեղադրված Արնօլը ճանաչվեց յանցաւոր միայն երկու կէտերով եւ դատապարտվեց երեքամիլիոն բանտարկութեան: Մեղադրական ակտի մնացած 34 կէտերի վերաբերմամբ Արնօլը ճանաչվեց արդար:

Երգիչ Կոստանեան, որ այժմ երգում է Կիւրիսի վաղարշապէս, տեղական «Воскрешенье» լրագրի անկողի, մեծ աջողութիւն ունի: «Կարմէն» օպերայում Դոն ինչի վերում նա անսղէս եկաւ հասարակութեան առաջ սիրող կրթու-

նի, Ռաֆայէլ Պատկանեանի եւ իր եղբոր՝ Միքայէլ Պատկանեանի գրուածները «Արարատ» բախտ չունեցաւ երկար գոյութիւն ունենալու, միայն մի տարի ապրեց: Նա դադարեց հրատարակվելուց հետեւեալ պատճառներով, եւ այն ամենադատարկ առիթով: Լազարեանների յայտնի տոնի, այդ մեկնեանների եւ հայ ժողովրդի կրթութեան այդ պիտանքների, իր հայրենակից հայերին բարեգործութիւն անելու եւ լուսաւորութիւն տարածելու գործում այդ հազուագիւտ բարեգործների միակ ժառանգն ու ներկայացուցիչը, 7 տարեկան Յովհաննէսը վախճանվեց Գաբրիէլ Պատկանեանը, ցաւակցելով անմիթթար վախճան, Լազարեանների ամբողջ տոնի միակ ուրախութեան եւ պարծանքի անժամանակ մահվանը, լրագիրը սեւ չըջանալով հրատարակեց: Այդ պատճառով էլ կատարութիւնը դադարեցրեց լրագրի հրատարակութիւնը: 1851 թ.ին, «Արարատ» լրագրի դադարեցում յետոյ, Ներսիսեան դպրոցը կարգաւորելու նրկատմամբ իր գործը աջող վերջացրելով, Գաբրիէլ քահանան վերադառնում է Նոր-Նախիջևեան, որտեղ շարունակում է իր հոգեւոր սպասարկութիւնը ու, Լուսաւորիչ եկեղեցում եւ պարագմունքներն իր դպրոցում, որից երբէք չէ բանտարկում, գրաւելով մի շարք աշակերտներ եւ հետեւողներ: Նոր-Նախիջևեանում այդ ժամանակ հայ հասարակութեան մէջ մղվում էր կուսակցութիւնների մի խիստ պայքար, եւ

հարաւային բնաւորութեան համապատասխան արտայայտութիւնների նախադու է բնական հասարակ եւ ընտրոյ կերպով: Երգիչը այդ ներկայացմանը ստացաւ մի քանի պարգէներ:

Երէկ, փետրվարի 23-ին, Աստրախանից մեկ ստացանք հետեւեալ հեռագիրը. «Սաստիկ վնասված ենք մեր պատմաբան եւ բազմաշխատասէր Երիցիանի մահվամբ: Յանկանալ պատուել նրա անմոռաց յիշատակը՝ ուղարկելու ենք պակի փոխարէն 4 օրինակ «Մուրճ» պիլական հայ ուսումնարաններին, թող սա Աստրախանի յարգողների պակը Երիցիանը զազդի վրա Գահանաներ Մկրտումեան, Արքաւան, Ասրիկեան, Մարսիկեան, Պօղոսիկեան, Սուրբէկեան, Տէր-Յովհաննիսեան, Տէր-Չարաբեան, Սողոմոնեան, Ծարմանեան, Սօրօյեան, Աւագեան, Նարեան, Թաւրիզեան, Փանոսեան, Գանջունեան, Չաքարեան, Փարեմուղեան, Հայկերեան, Սօրօյեան»:

Գօգօյի արձանի կառուցման մասնաժողովը որ կազմված է Մօսկվայում, մայրաքաղաք լրագիրների անկող, արդէն ժողովել է նպատակով 93,700 ռուբլի: Մասնաժողովը արդէն ընտրել է արձանի նախագիծը նրա քմութեան ներկայացրած 43 նախագծերից եւ մասի գիր է կարճ ժամանակից յետոյ ձեռնառնելով արձանի կառուցման:

Ուրբաթ, փետրվարի 22-ին, Թիֆլիսի արշին կատարական գիմնադրարում տեղի ունեցրական-կրթական երեկոյթ, նուիրված Գօյի մահուան յիշատակելու Գիմնադրարի շակերտական երգեցիկ եւ կրթական խում անուրաց եւ երգեց մի քանի կրթական կտորներ եւ երգեց, յարմարեցրած յիշատակատնախմբութեան Ուսուցիչ Կարպիսիկի կողմից մի ճառ Գօգօյի անձնաւորութեան մասի: 7-րդ դասարանի մի աշակերտ կարգաց բանտեղծի կենսագրութիւնը, իսկ 8-րդ դասարանի աշակերտ ինչիսիկ կարգաց «Գօգօյի նշանաւորութիւնը ուսուց գրականութեան պատմութեան մէջ»: Ապա տեղի ունեցաւ աշակերտների մրցանակարաշխութիւն. 136 աշակերտ ստացաւ Գօգօյեան պարգէներ:

«Донецкая Рѣчь» լրագրին հեռագրում Թիֆլիսից, որ Վրացիկավագի երկուսու ընկերութիւնը արդէն ձեռնառնում է նախնախնդրութեանը: Ինչպէս յայտնի է, ընկերութեան վերահսկան նպատակն է Վրացիկավագի երկուսու լրագրի Սեւ ծովի արեւելեան ափերի վրայ միացնել Անդրկովկասեան երկաթուղային զին հետ:

Մօսկվայի ոստիկանապետի կարգադրութեամբ, ինչպէս հաղորդում են ուսու թիւթերը, քաղաքային ընթերցարաններում արգելված է ստանալ մայրաքաղաքի բոլոր թիւթերը: Բացի «Московский Истокъ» եւ «Московский Вѣдомости» լրագիրներից:

ԲԱՊՈՒԻՑ մեզ հարորդում են. «Փետրվարի 20-ին, Բագուում հայ դերասանական դրամա-

Գաբրիէլ վերին աստիճանի անչահասէր մեղ լինելով չէր քաշվում զօրաւոր մարդկանց րեանքին ճշմարտութիւնն ասելուց (նա մամբ ծանօթ էր Կովկասի փոխարքայ Էլչիկ Վօրոնցովի հետ, որի հետ գրագրութիւն ունէր), նոյն իսկ Ներսէս կաթողիկոսին (ստանալով անհաշիւ քաղաքացիութիւնների պատմութեան պատմութեանը, ինչպէս նա ընտրեց հետեւեալ յիշատակեց Գաբրիէլը, նրա զլլին մեղ զքաղաքութիւն է գալիս (այդ մասին մենք սայժմ լուում ենք, սպասելով նրա սեփական ինքնակենսագրութեան լրյա աշխարհ գալու): Եւ այսպիսով աչքից ընկած լինելով 1853 թ.ին նա հարկադրված էր ապարէզից հեռանալ մի կողմ քաշվել:

Փառքից եւ պատուից այդ ժամանակաշրջանում չէ թուլացնում ամենեւին Գաբրիէլեանը: Նա առաջիկայ պէս պարագում է գրականութեամբ, բանաստեղծութեամբ, ուղղութեան է իր յայտնի աշակերտ Միքայէլ Նալբանդեանի երկարատեւութիւնները, գրագրութիւն է ունենում իր բարեկամների, գիտնականների բանաստեղծների հետ:

Ի միջի պրոց, նա ծանօթանում է լեհացի բանաստեղծ Միցկևիչի հետ, որը հիացած ինչիսիկ եւ կրթութեան վրա նրա պատուին մի կողմ քաշվել:

*) Թեւ Ներսիսեան դպրոցը 1824 թ.ին էր բացված, սակայն մովսէսեան կաթողիկոսի օրով դպրոցը անկան վիճակին հասնելով բոլորովին փակվում է:

քի եւ անասունների կերակրի պակասութիւնը առաջ է բերել առեւտրի ընդհանուր դադարումն Բորխոզիերակի գաւառի եւ Դոնեան նահանգի լայն շրջանում:

23 փետրվարի

ՊԵՏԵՐՔՈՒՐԳ: Ֆինանսների մինիստրը հաստատեց կանոնադրութիւնը այն մասին, որ ոսկի եւ պլատին արդիւնաբերող ձեռնարկութիւնները ենթարկվեն արդիւնաբերական պետական տուրքին: Ժողովրդական լուսավորութեան մինիստրութիւնը չըջարեաբար առաջարկեց ուսումնական շրջաններին՝ աշակերտներին բարձրագոյն դասարանները փոխադրելու նոր կարգ: Երեքից ոչ պակաս ունեցողները փոխադրվում են առանց քննութեան, թոյլ աշակերտներին կարող են արվել առանձին քննություններ աշխատանքները երկու գլխաւոր ստորկաներից 2 ունեցողները քննութեան կենթարկվեն արձակուրդից յետոյ, մէկ հատ 2 ունեցողը կարող է քննվել զարմանք:

ԱՌԷՆԻ: Մրգելված է զէնքերի եւ պատերազմական մթերքների մուտքը Սալոնիկ եւ Սօնատուրի թիւրքաց սահմանով: Կառավարութիւնը այս քայլն արեց՝ ցանկալով դիմադրել Սակեղեմիայում յուզմունքներ յարուցվելուն: ԲՕՍՏՈՆ: Այստեղ եկաւ պրինց Հէնրիխ եւ հանդիսաւոր կերպով ընդունվեց: Հէրվարդեան համալսարանը նրան մատուցեց իրաւարանութեան պատուաւոր դոկտորի դիպլոմ:

ՊԵՏԵՐՔՈՒՐԳ: Կիւմից, Ատարխանից, Եկատերինսուաւից, Ժիտոմիրից, Տամբուլից, Օրէնբուրգից, Լեբեդեանից, Բաթումից եւ Պետրոզավոզսկից ստացված են տեղեկութիւններ Գոգոլի յիշատակը տօնելու մասին: ՄՕՍԿՎԱ: Մոսկովայի շրջակայքի լեռնարդիւնաբերողների համաժողովը որոշեց միջնորդել Տորֆային ձահիճները հետազոտելու եւ վիճակաբերու մասին: Գոգոլի ազգական Բիկովցու ցարանդեւ բերեց Գոգոլի ուղեպարկը, ճանապարհորդական ծիւղեր, նոյնպէս նրա տուփը եւ ոսկի ժամացոյցը, որ պատկանում էր Պուշկինին, որը, մնամարտութիւնից յետոյ ժուկովսկին վերցրել է յանձնել էր Գոգոլին: ԽՍՖԱՐՈՎՍԿ: Գոգոլի յիշատակը տօնին ներկայ էին գնդապետ Մարչալ եւ նրան ուղեկցող ֆրանսիական օֆիցերները:

ՍՈՒԽՈՒՄ: Փետրվարի 22-ին պրինց Ալէքսանդր Պետրովիչ Օրլէնբուրգսկի, պրինցուհի Եւգենիա Մաքսիմիլովնայի, Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնայի եւ նրա ամուսին պրինց Պետր Ալէքսանդրովիչ Օրլէնբուրգսկիի հետ Գաբրիել ուղեւորվեց Նովորոսիսկ եւ այնտեղից Ռամոն կարուածքը:

ՕՐԵՆԲ: Հանդիսաւոր կերպով օրհնվեց կամաւոր նաւատորմի «Մաթեմակ» կրէյսերը: ՊԵՏԵՐՔՈՒՐԳ: Արխանգելսկից, Երեւանից, Բազուից եւ Կալինից ստացված են տեղեկութիւններ Գոգոլի յիշատակը տօնելու մասին:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱՍԱՆԹԱՐ Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆՆԱՆ ԻՍԱՀՄԿ ՄԷԼԻԲ-ԱՂԱՄՍԱՆՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԳՐԿՈՎՎԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագծում թիֆլիսի հաշուով) Արագ գնացք թիֆլիսից-Բագու շարքը մէկ անգամ հինգշաբթի օրերը զուրս է գալիս ցերեկվայ 2 ժամ 32 րոպ. (3 ժ. 30 ր.), հասնում է Բագու զինվորայ 3 ժամ 58 ր. (4 ժ. 56 րոպէին):

Արագ գնացք Բագուից-թիֆլիս զուրս է գալիս չորեքշաբթի օրերը երեկոյան 10 ժ. 41 ր. (11 ժ. 39 ր.) հասնում է թիֆլիս ցերեկվայ 12 ժ. 47 ր. (1 ժ. 45 ր.):

Պատասար գնացք Բագուից զուրս է գալիս զինվորայ 12 ժ. 2 ր. (1 ժամին), հասնում է թիֆլիս ցերեկոյան 6 ժ. 24 ր. (7 ժ. 22 ր.), զուրս է գալիս թիֆլիսից արտուտեան 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.), հասնում է Բաթում արտուտեան 8 ժ. 33 ր. (9 ժամ 31 րոպէին):

Մարդատար գնացք Բագուից զուրս է գալիս ցերեկվայ 3 ժ. 35 ր. (4 ժ. 33 ր.), հասնում է թիֆլիս արտուտեան 8 ժ. 50 ր. (9 ժ. 48 ր.), զուրս է գալիս թիֆլիսից արտուտեան 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.), հասնում է Բաթում արտուտեան 9 ժ. 28 ր. (11 ժ. 26 ր.):

Պատասար գնացք Բաթումից զուրս է գալիս երեկոյան 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), հասնում է թիֆլիս արտուտեան 10 ժ. 45 ր. (11 ժ. 43 ր.), զուրս է գալիս թիֆլիսից ցերեկվայ 11 ժ. 47 ր. (12 ժ. 45 ր.), հասնում է Բագու արտուտեան 6 ժ. 33 ր. (7 ժ. 31 ր.):

Մարդատար գնացք Բաթումից զուրս է գալիս արտուտեան 8 ժ. 58 ր. (9 ժ. 56 ր.), հասնում է թիֆլիս արտուտեան 8 ժ. 33 ր. (9 ժ. 31 ր.), զուրս է գալիս թիֆլիսից երեկոյան 9 ժ. 36 ր. (10 ժ. 34 ր.), հասնում է Բագու ցերեկվայ 2 ժ. 12 ր. (3 ժ. 10 ր.):

Պատասար գնացք զուրս է գալիս թիֆլիսից զինվորայ 10 ժ. (10 ժ. 58 ր.), հասնում է Ղարաբաղի արտուտեան 5 ժ. 4 ր. (6 ժ. 2 ր.), Ալէքսանդրով 8 ժ. 37 ր. (9 ժ. 35 ր.), Կարս ցերեկվայ 12 ժ. 23 ր. (1 ժ. 12 ր.):

Պատասար գնացք Կարսից զուրս է գալիս ցերեկվայ 12 ժ. 12 ր. (5 ժ. 10 ր.), հասնում է Ալէքսանդրով 7 ժ. 40 ր. (8 ժ. 38 ր.), Ղարաբաղի արտուտեան 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), թիֆլիս արտուտեան 6 ժ. 47 ր. (7 ժ. 45 ր.):

Խառն գնացք թիֆլիսից զուրս է գալիս ցերեկվայ 12 ժ. 30 ր. (1 ժ. 28 ր.), հասնում է Սանահին ցերեկվայ 5 ժ. 12 ր. (6 ժ. 10 ր.) եւ Ղարաբաղի արտուտեան 7 ժ. 19 ր. (8 ժ. 17 ր.):

Խառն գնացք Ղարաբաղից զուրս է գալիս արտուտեան 11 ժ. 45 ր. (12 ժ. 43 ր.), հասնում է Սանահին ցերեկվայ 1 ժ. 30 ր. (2 ժ. 28 ր.) եւ թիֆլիս արտուտեան 6 ժ. 8 ր. (7 ժ. 6 րոպէին):

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կերակր. փետրվարի 24-ին

Դերասան Ա. Ր. Մ. Ե. Ն. Ե. Ա. Ն. Ը.

Մասնակցութեամբ տ.տ. Չ. Ղ. Կեանի, Մ. Էլբեանի, Մայսուրեանի, պ. պ. Արաքեանի, Յարութիւնեանի, Ա. Թոի եւ Միրզոյեանի, կը տայ մի ԱՐՏԻՍՏԻՔԱՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ

Կը խաղան

Մ Կ Ն Ի Կ

Վոլորվի 1 արար. Թարգմ. Վրոյրի

ԿՐԷՄՕՆԻ ՎՆԱԳՈՐԾԸ

Կամէր. 1 արար. հեղ. Յրանսուա Կոպպէի, Թարգմ. Արմենեանի

ԳԻՇԵՐՎԱՆ ՍԱՐԲԸ ԽԷՐԷ

Վոլորվի 1 արար. հեղ. Գ. Սունդուկեանի

Սկիզբն է ճիշտ 8 ժամին երեկոյան եւ վերջը 10 1/2-ին:

Տոմարները կարելի է ստանալ ժողովրդաժողովրդից:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Երկրորդում է, որ իր ատենում ներկայ փետրվարի 25-ին, ցերեկվայ 12 ժամին աճուրդ է նշանակված շինելու 45,00 ազգ. սամէն քէտոնի կոյուղի, որի արամադիքը կը լինի 0,375x0,25, որ կը սկսվի Սերբերանի-րեադի ե. Ծամինայա փողոցների անկիւնում գոյութիւն ունեցող կոյուղից մինչեւ Բալչայա-Ֆրեադայա փողոցի վրա Բաղդիբոյի տունը, 1000 ր. գումարով: Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանները Վարչութեան Շինարարական բաժնում բոլոր ի օրերը, ցերեկվայ 9 ժամից մինչեւ 3 ժամը:

ՊԵՏԵՐՔՈՒՐԳԻ ԵՐԿՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Պետերբուրգի բժշկական վարչութեան թրուտութեամբ Մեծ արկղիկը 5 րուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.:

Պետերբուրգի բժշկական վարչութեան թրուտութեամբ Մեծ արկղիկը 5 րուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.:



ՆՈՐ ՄԻՋՅՑ մաղերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփուր Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՁՈՒՒ ԿԱԹԸ

Երեւին քննութիւն եւ սպիտակութիւն տարու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութեանը, մոռները, տալիս է կաշուին քննութիւն եւ սպիտակութիւն: Այդ գները չափաւոր են. մեծ օրուակը, արկղիկի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Մասկում են բոլոր պարֆիւմերական եւ զեղազանաւան խանութներում: Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինի փողոց, տ. № 15, բընակարան № 2. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում՝ Կովկասեան զեղատան ապրանքների վաճառան ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայելեան փողոց եւ Բագուում՝ նաեւ Միքայելեան կամուրջի վրա, Պոսոլի եւ Արիստակովի զեղատաներում: Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս պատուով: 49—100

ՀՈՅՄ ԵՆՍԱԸ ԻՐԻՅ ՎԵՍԵԼՈՎՍԿՈՒ

ARMYANSKIY POET' SMYAT' SHAH' AZIZ'

Գրքերից կցած են՝ Սմբատ Շահ-Ազիզի լուսատիպ պատկերը, «Լեւոնի Վախի» մի շարք կտորների եւ այլ ոտանավորների ուղեւորէն թարգմանութիւնը: Ցանկացողները դիմում են հեղինակին հետեւեալ հասցեով. Москва, Леонтьевский пер., № 11, кв. 17, Юрию (Георгию) Алексеевичу Веселовскому. 2—10

ԲԵՐՂԵՂԷՄ ԵՎԵՆՑՈՒ յարգելի ծխականներին խնդրում եմ չնորճ բերել առաջիկայ կերակր. փետրվարի 24-ին, ժամի 12-ին, պատարագից յետոյ տեսնելու 1901 թ-ի երեւոյց հաշիւը եւ քննելու 1902 թ-ի նախահաշիւը: Գործակալ ա. մ. Չ. քան. Չարդիզեան 3—3

ԵՐԿՈՒ ՕՐՈՎ ՆՇԱՆԱԿՎԱԾ Է Է Ժ Ա Ն Ա Ի Ի Ն Վ Ա Ճ Ա Ռ Ք ԴՕՐՕԺՆՕՎԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ

ԷժԱՆ ՎԱՃԱՌԻԹԻ Ժամանակ 40%/-ից ՄԻՆՉԵԻ 50% զեղումով կը ծախվեն ամառ կտորներ, կանանց բոլոր կոփտանք, գործարանի գները 50%/-ի չափ պակասեցրած գներով: Կանանց գունաւոր բլուզների կտորները կը ծախվեն 60% ՉԻՂՈՒՄՈՎ: 1901 թ-ականի սեզոնի ամառային կտորների զեղումը 40%/-ից ՄԻՆՉԵԻ 50% է: Կը վաճառվեն նաեւ մեծ քանակութեամբ քաթմանի մնացորդ կտորներ, թաշկինակներ, թաւաքանդակներ սպիտակեղէնի եւ սաւանների համար, տղամարդկանց եւ կան պատրաստի սպիտակեղէն, գուլպաներ, կարճ եւ երկար բլերով, ամառային եւ ձմեռային մակներ, տիւլ վարպաղյանների համար, թաւաքանդակներ, սպիտակեղէն եւ այլ ապրանքներ: Առեւտրի կարգը էժանագին վաճառքի ժամանակ.—խանութը բաց կը լինի առաւել ժամի 10-ից մինչեւ ժամի 3-ը եւ ժամի 5-ից մինչեւ երեկոյան ժամի 8-ը:

ԹԻՖԼԻՍԻ Կենտրոնական Գրախաճատսնցում

Վ ա ճ ա ո Վ ո լ մ ե ն Վ Միխիլ Ս. պատերազմաբար շքեղ հրատարակութիւն, Վենետիկ, 1901 թ. գ. 2 ր. էՓՐԻԿԵԱՆ Հ. Ս., «Գրքանի առաջա», Բ. տիպ, ըսգմաթիւ տեղեկութիւններով, Վենետիկ թ. գ. 1 ր. 75 կ. ՃՈՒՂՈՒՐԵԱՆ ՅԱՐ. քան., «Աղբատի հալը», գաւառական կեանք, Թիֆլիս 1902 թ. գ. 25 կ. ՎՏԱԿ, գրական-բանասիրական ժողովածու, խմբ. Վ. Փափաղեանի, Թիֆլ. 1901 թ. գ. 1 ր. ՄԱՐԻՍ ԿՈՐԵԼԻ, «Մի մանկան հողու պատմութիւն», արեւելքը «Եղբայրական օգնութիւն» ուսու. թարգմ. Տ. Վ. Վրչը, 1902 թ. գ. 1 ր. ԱՀԱՐՈՆԵԱՆ Ա., «Պատկերներ», տաճկահայոց վերջին տարիների կեանքից, թուով 10 հ. Մօսկովա դիւն է 1 ր. ՊԱՏԿԱՆԵԱՆ ՌՍՓ. (Գամառ-Գաթիպա), «Ըտիր երկասիրութիւններ», 2 հատոր, անկապ 3 կազմով 4 ր. ՆԻԼԷՐ, 1. «Վիլհէլմ Տէլը»—15 կ., 2. «Օրէնների կոյր»—20 կ., թարգմ. Ս. Թառայեանի: Դիմել՝ Вь Тифлисе, въ Центральную Книжную Торговлю. (4) 1—5

Հ Ա Յ Վ Ա Կ Ա Ն Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում Հ Ա Տ Ո Ր Ե Ր Կ Ր Ր Ր Դ XVIII ԴԱՐ Ա ա ա ջ ր ն մ ա ս ԳԻՆԸ 1 ԲՈՒՐԼԷ 50 ԿՕՊԷԿ

Մասկում է. հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը, Հասցէն՝ Тифлисе, Редакция Мшак' «Գրատեսնիք» գրախաճատսնցումը Հասցէն՝ Тифлисе, Книжный магазинъ „Гуттенбергер“ Նոյն տեղերում ծախվում են նոյն հեղինակութեան ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ մնացած օրինակները: Գինը 1 րուբլի 50 կոպէկ:

„Փ. Ն. Փ Ր Ի Դ Օ Ն Ե Ա Ն“

ԿՈՆՏԷՏԻ ԵՒ ՇՕԿՈԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կովկասեան գիւղատնտեսական ցուցանախոսում մեր պատրաստած ապրանքները արժանացան Կովկասում կոնֆէտի արդիւնաբերութեան ՄԻՍԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՑ ՄԵԴԱԼԻ Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱՍ-ՂՈՅՈՒՄԻ, Կարամէլ «ԻԻԻԻԻԵՆԱՅԱ» եւ առհասարակ բարձր յատկութեան կարամէլներ մրցեղէնով: Գործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետներ: Պատուէրներով դիմել. Թիֆլիս, Պալլոսկայա փողոց. սեփական տուն Գործարանի հեռախոս № 362, գործարանական խանութիցը № 772: 29—100 (5. 4)